

ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆ

3 000 ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԿՆՔԵՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ
ՇՈՇԱՓԵԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ Է ԳՐԱՆՑՈՒՄ

Ապրիլի 4-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին կառավարության նիստում, անդրադառնալով իր նախածեռնությանը մարտի 1-ից մեկնարկած սոցիալապես անապահով աշխատունակ բնակչության զբաղմունքի ծրագրի իրականացմանը, հայտարարեց, որ արդեն 20 հազար թափուր աշխատատեղ է գրանցվել և սոցիալապես անապահով ընտանիքներից ավելի քան 15 հազար դիմում է ներկայացվել, իսկ 3 հազարն արդեն ստորագրել է համապատասխան աշխատանքային պայմանագիր:



- Պետք է օբյեկտիվորեն նշել, որ ծրագրի մեկնարկից հետո երեք շաբաթվա ընթացքում նման արդյունքը վկայում է այս ծրագրի նկատմամբ շատ մեծ հետաքրքրության մասին: Եվ մեկ անգամ կոչ եմ անում մեր քաղաքացիներին ներգրավվել այս ծրագիր, այլ որքան հնարավոր է շատ սոցիալապես անապահով քաղաքացիներ պետք է միանան այս ծրագրին, որպեսզի ավելի շատ եկամուտ ստանան և մասնակցեն մեր երկրի տնտեսության կառուցմանը, բազմաթիվ ծրագրերի իրականացմանը, նշեց Իրակլի Դարիբաշվիլին:

Վարչապետի խոսքով, Վրաստանում սոցիալապես անապահով 600 հազար քաղաքացիներից ավելի քան 200 հազարը աշխատունակ է և, ըստ ծրագրի, սոցիալապես անապահով ընտանիքների անդամներին կառաջարկվի այնպիսի աշխատանք, որի դիմաց վերջիններս ամսական 300 եւ ավելի լարի աշխատավարձ կստանան:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՆՈՐ ԴԻՆԱՄԻԿԱ, ՆՈՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ապրիլի 5-6-ը Վրաստանի խորհրդարանի պատվիրակությունը՝ նախագահ Շալվա Պապուաշվիլու գլխավորությամբ, պաշտոնական այցով գտնվում էր Հայաստանում: Խորհրդարանական պատվիրակության կազմում էին խորհրդարանի նախագահի առաջին տեղակալ Գիա Վոլսկին, խորհրդարանի պատգամավորներ Սոզար Սուբարին, Սամվել Մանուկյանը, Սմբատ Կյուրեղյանը, Խաթունա Սամնիժեն, Էլզուրա Գոցիթիժեն:

Այցի շրջանակներում, Վրաստանի օրենսդիր մարմնի ղեկավարը հանդիպումներ ունեցավ հայ գործընկերոջ՝ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի, երկրի նախագահ Վահագն Խաչատուրյանի, վարչապետ Նիկոլ Փաշինյանի, արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հետ, այ-



ցեղեց Երեւանի Սերգեյ Փարաշա-նովի տուն-թանգարան: (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԵՎՐԱՆՏԵԳՐՈՒՄ

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆԸ ԱՆՊԱՍԿՅՈՒԹՅԱՆ ԴԻՍՈՒՄԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆԵՐ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ապրիլի 1-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու գլխավորությամբ անցկացվեց Եվրամիությանը Վրաստանի ինտեգրման կառավարական հանձնաժողովի 61-րդ նիստը, որի հիմնական հարցը Եվրամիության անդամակցելու Վրաստանի պաշտոնական դիմումի հետ կապված նոր իրողություններն ու հեռանկարներն էին:

Ընդգծվեց, որ դիմումից հետո Վրաստան-Եվրամիություն հարաբերությունները թեւակոխել են նոր փուլ, երկիրը հաջողությամբ շարունակում է ԵՄ-ի հետ Աստ-

ցացման համաձայնագրով և Աստցացման օրակարգով նախատեսված բարեփոխումներն ինչպես (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱՉՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄՆ ԿՎԵԼԱՅՎԵԼ Է ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻՈՎ

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու որոշմամբ կրոնական կազմակերպությունների ֆինանսավորումն ավելացվում է՝ մինչև 2022 թվականը գոյություն ունեցող 4,5 միլիոն լարիին ավելանում է մեկ միլիոն լարի:

Այդ գումարով մասնակիորեն փոխհատուցվելու է խորհրդային տոտալիտար ռեժիմի կրոնական միավորումներին հասցված նյութական և բարոյական վնասը:

Ֆինանսավորման ավելացման հարցում մի քանի կարեւոր հանգամանքներով, ներառյալ՝ կրոնական կազմակերպությունների հավատացյալների, հոգեւորականների և կրոնական շենքերի թիվը, և որոշում ընդունվել է Կրոնական գործակալության և կրոնական միությունների հետ խորհրդակցելով: Մեկ միլիոն լարի գումարը կհատկացվի Վրաստանի կառավարության պահուստային ֆոնդից և կբաշխվի կրոնական կազմակերպությունների միջև՝ Կրոնի հարցերով պետական գործակալության կողմից:

Կրոնական հարցերով պետական գործակալության նախագահ Զաքա Վաչաղմաժեն կառավարության վարչակազմում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ վարչապետի որոշումը ներկայացրեց կրոնական կազմակերպությունների ղեկավարներին:

Կրոնական կառավարությունն առաջնորդվել է կրոնական կազմակերպությունների

ԱՊՐԻԼԻ 9-Ը՝ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՕՐ

ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՎԵՐԱԾՎԵՑ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿԱԳՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՕՐԿԱ



Այսօր՝ ապրիլի 9-ին, լրացավ 1989 թվականին Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու պողոտայում տեղի ունեցած ողբերգության 33 եւ Վրաստանի Անկախության հռչակագրի ընդունման 31-ամյակները:

գործողության արդյունքում զոհվեց 21 մարդ, հանրահավաքի հարյուրավոր մասնակիցներ թունավորվեցին զորամիավորումների օգտագործած գազից:

կերպությունների ներկայացուցիչներ իրենց խոնարհումն են բերում ապրիլյան ողբերգության զոհերին՝ Ռուսթավելու պողոտայում, ողբերգության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողի մոտ ծաղիկեպսակներ դնելով:

Կորոնավիրուսով պայմանավորված խիստ սահմանափակումների պայմաններում, զանգվածային հանրահավաքներ չեն անցկացվում, թեև մարդիկ առանձին-առանձին մոտենում են հուշակոթողին, և այն զարդարում ծաղիկներով:

Օրացուցային սովորական օրը՝ ապրիլի 9-ը, երկու տարվա տարբերությամբ ազգային ողբերգության օրից վերածվեց պետական Անկախության հռչակագրի ընդունման և Ազգային միասնության օրվա:

Ողբերգությունից ուղիղ երկու տարի անց՝ 1991 թվականի ապրիլի 9-ին, Վրաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց երկրի Անկախության հռչակագիրը՝ բացելով անկախ Վրաստանի պատմության նոր էջը:

Սկսած 1990 թվականից, այդ օրը հազարավոր մարդիկ, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմա-

1989 թվականի ապրիլի 9-ի լուսաբացին խորհրդային գործերը բռնությամբ ցրեցին մայրաքաղաքի կենտրոնում անցկացվող խաղաղ հանրահավաքը: Բռնի

ԵՎՐԱՆՏԵԳՐՈՒՄ

ՀԱՇՏԵՑՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԿԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐՈՎ ՊԵՏԱՄԻՍՐԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅՈՒ ԱՄՆ



Վրաստանի հաշտեցման և իրավահավասարության հարցերով պետական նախարար Թեա Ալվլեդիանին աշխատանքային այցով գտնվում էր Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այցի շրջանակներում, պետնախարարը պաշտոնական հանդիպումներ ունեցավ ԱՄՆ պետքարտուղարի հակամարտությունների և կայունացման գործողությունների հարցերով օգնական Աննե Վիտկովսկու և բնակչության փախստականների ու գաղթի հարցերով պետքարտուղարի օգնական Լեսլի Ջիմանի հետ:

Ներին մանրամասն տեղեկատվություն փոխանցեց Վրաստանի բռնազավթված տարածքներում անվտանգության, հումանիտար և մարդու իրավունքների տեսանկյունից առկա իրավիճակի վերաբեր- (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Հանդիպումների ընթացքում պետնախարարը ԱՄՆ պետական դեպարտամենտի ներկայացուցիչ-

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

ԻԼԻԱ ԴԱՐՉԻԱՇՎԻԼԻՆ՝ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ, ԻՍԿ ԴԱՎԻԹ ԶԱԼԿԱԼԻԱՆԻՆ՝ ԱՄՆ-ՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆ

Ապրիլի 4-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հատուկ հրավիրված ճեպատուխում հանրությանը տեղեկացրեց երկրի կառավարության կազմում իրականացվելիք փոփոխությունների մասին:

Ինչպես նշեց վարչապետը, հաշվի առնելով ԱՄՆ-ի առանձնակի դերակատարությունը անկախ Վրաստանի պատմության մեջ երկու երկրների միջև առկա ռազմավարական հարաբերությունները, որոշում է ընդունվել ԱՄՆ-ում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպանի պատասխանատու պաշտոնը վստահել փորձված դիվանագետ, Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանին: Իսկ երկրի արտաքին գերատեսչությունը կղեկավարի Վրաստանի կառավարության աշխատակազմի ղեկավար Իլիա Դարչիաշվիլին:

41-ամյա Իլիա Դարչիաշվիլին 2002-ին ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի «Ֆինանսներ և բանկային գործ» բաժինը՝ ստանալով տնտեսագիտության բակալավրի աստիճան: 2004-ին նույն համալսարանում ավարտել է «Մաքսային գործ և տնտեսագիտություն» բաժինը՝ ստանալով մագիստրոսի կոչում: 2011-ին ավարտել է Ֆրանսիայի Գրենոբլի համալսարանը՝ ստանալով բիզնեսի կառավարության մագիստրոսի կոչում:

սարանը՝ ստանալով բիզնեսի կառավարման մագիստրոսի կոչում: Տարիներ շարունակ աշխատել է Վրաստանի բանկային հատվածում, գլխավորել Վրաստանի մունիցիպալային զարգացման հիմնադրամը: Վարել է Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառուցվածքի փոխնախարարի պաշտոնը, իսկ 2012 թվականից աշխատանքի անցել արտաքին գործերի նախարարության համակարգում: Տարբեր տարիներին եղել է գերատեսչության արտակարգ հանձնարարությունների դեսպան, Լեհաստանում Վրաստանի դեսպան: 2021-ից գլխավորել է Վրաստանի կառավարության աշխատակազմը:



ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՆՈՐ ՓԱԹԵԹ. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՇՈՒՄՆԵՐԻ ԱՆՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ
Եվրամիությունը Ռուսաստանի դեմ պատժամիջոցների նոր փաթեթ է պատրաստում, թեև նոր սահմանափակումները չեն ազդի էներգետիկ ոլորտի վրա:
Միաժամանակ, Եվրամիությունը անհրաժեշտ է համարում շարունակել դիվանագիտական շփումները Ռուսաստանի հետ և չի մեկնաբանում նոր պատժամիջոցների բովանդակությունը:

ՄԱԿ

ԴԱՎԱՐԵՑՎԵԼ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ
93 կողմ, 24 դեմ ձայների հարաբերակցությամբ բանաձև է ընդունվել, որով կասեցվում է Ռուսաստանի անդամակցությունը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին: Բանաձևի կողմնակիցների թվում էր Վրաստանը:
Ռուսաստանի անդամակցության կասեցմանը դեմ են քվեարկել Բելառուսը, Յուսիսային Կորեան, Չինաստանը, Իրանը, Ղրղզստանը, Բոլիվիան:
Չեռնպայի է մնացել 58 անդամ:

ԵՎՐԱՄԻՆԵՑԳՐՈՒՄ

ՀԱՇՏԵՑՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎԱՅԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԵՏՆԱԽԱՐԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ԱՄՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

յալ: Թեա Ավալեղիանին առանձնակի ընդգծեց դիմակայության գոտու երկայնքով տեղաշարժերի սահմանափակման և ապօրինի ձեռքարկությունների փաստերը:

իրավահավասարության հարցերով պետնախարարը մանրամասն պատմեց երկրի կառավարության կողմից իրականացվող հաշտեցման և ներգրավման քաղաքականության մասին՝ ընդգծելով, որ գործադիր իշխանության քաղաքականությունն ուղղված է դիմակայության գործով արհեստա-

կանորեն տարանջատված հասարակությունների միջև երկխոսության, ընդհանուր շահերի շուրջ համագործակցությանն ու վստահության վերականգնմանը:

Պետդեպարտամենտի ներկայացուցիչները կրկին ընդգծեցին Վրաստանի ինքնիշխանության և տարածքային

ամբողջականության հարցում ԱՄՆ-ի կողմից պաշտպանության պատրաստակամությունը:

Վրաստանի պետնախարարը մասնակցեց Ամերիկայի արտաքին քաղաքական խորհրդի կողմից կլոր սեղանի ձեւաչափով հանդիպմանը:

ՌՈՒՄ - ՈՒՎՐԱՄԻՆԱԿԱՆ ՈԱԶՄԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ 44-ՐԴ ՕՐԸ... ՎԵՐՋԸ ԶԻ ԵՐԵՎՈՒՄ

Այսօր՝ ապրիլի 9-ին, լրացավ ռուս-ուկրաինական ռազմական դիմակայության 44-րդ օրը:

Երկրի տարածքային ամբողջականությունը պաշտպանելու համար պատերազմը, որը ռուսների կողմից հիշատակվում է որպես «հատուկ գործողություն», 44-օրյա դիմակայության ընթացքում, Ուկրաինայի համար դարձել է տասնյակ հազարավոր զոհերի, ավերված քաղաքների ու ավանների, ոչնչացված նյութական արժեքների արհավիրք: Ինչպես և բոլոր պատերազմներում դիմակայող կողմերի՝ միմյանց կորուստների մասին լրատվու-

թյունը իրարամերժ է, չափազանցված ու միակողմանի:

Այսպես, ուկրաինական կողմի տվյալներով, պատերազմի ընթացքում, ռուսական կողմը կորցրել է ավելի քան 16 հազար զինծառայող, ոչնչացվել է 575 տանկ, 1640 զրահամեքենա, 293 հրետանային մարտկոց, 91 համազարկային կրակակետ, 51 զենիթային միջոց, 1131 ավտոմեքենա, ոչնչացվել է 117 ինքնաթիռ, 127 ուղղաթիռ և 56 անօդաչու թռչող սարք: Սեւ ծովի

ավազանում ոչնչացվել է նաև ռուսական 7 ռազմանավ և մոտորանավ, պայթեցվել է վառելանյութով 73 երկաթուղային տարողություն: Պատերազմի ժամանակահատվածում Ռուսաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի տվյալներով, ռազմական գործողություններում Ուկրաինայի տարածքում ոչնչացվել է 920 ռազմական օբյեկտ, այդ թվում՝ 71 կառավարման կետ և 61 ռադիոլուկացիոն կայան, ոչնչացվել է 1564 տանկ և զրահամեքենա, 627 հրամոթային մարտկոց, 158 համազարկային համակարգ, 1367

ավտոմեքենա, 170 զենիթային հրանոթ, 181 ինքնաթիռ և ուղղաթիռ, 255 անօդաչու թռչող սարք: Ռուսական գլխավոր շտաբի տվյալներով, ուկրաինական բանակը կորցրել է շուրջ 14 հազար զինծառայող: Այդ տվյալներով, ուկրաինական բանակը ունի 16 հազար վիրավոր: Ռուսաստանի կողմից գերեվարվել է 572 ուկրաինացի զինծառայող: Ռուսաստանի գլխավոր շտաբի տվյալներով, իրենց կորուստները կազմում են 1351 զոհված և 3825 վիրավոր զինծառայող: Սրանք դիմակայող կողմերի տվյալներն են: Այդուհան-

դերձ, եթե հիմք ընդունենք ռուսական կողմի վիճակագրությունը ոչնչացված ուկրաինական տանկերի և զրահամեքենաների քանակի մասին, ապա հեշտությամբ կարելի է պարզել, որ ուկրաինական բանակում այդ քանակության զրահատեխնիկա երբեք չի եղել, եթե իհարկե, հաշվի չառնենք այն, որ ուկրաինացիները կարող էին գրավել ռուսական տանկեր և դրանք օգտագործել ռուսների դեմ:
Ինչեւիցե, պատերազմը շարունակվում է 44 օր, և վերջը չի երեւում:

ԶՅԻՄՆԱՎՈՐՎԱԾ ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՍՑԵԻՆ

Ուկրաինայի պաշտպանության նախարարության հետախուզության գլխավոր վարչությունը Վրաստանի կառավարությանը մեղադրել է Ռուսաստանին ներքին կարգով աջակցելու և մաքսանենգությանը չմիջամտելու գործում:

«Միջազգային պատժամիջոցների սահմանման պատճառով Ռուսաստանի Դաշնությունը կորցրել է ռազմական, երկակի նշանակության և քաղաքացիական ապրանքների մեծ տեսակների մատակարարելու հնարավորությունը: Պատժամիջոցներից խուսափելու համար ռուս գործակալները մաքսանենգության ուղիներ են ստեղծում, որոնք, մասնավորապես, անցնում են Վրաստանի տարածքով:

Վրաստանի ֆինանսների նախարարությունը հայտարարում է, որ ցանկացած ապրանք, այդ թվում՝ պատժամիջոցների ցանկում նշված, ռազմական կամ երկակի նշանակության, ենթակա է մաքսային խիստ հսկողության վրացական իշխանությունների կողմից» - նշված է Վրաստանի ֆինանսների նախարարության տարածած հաղորդագրության մեջ:

ԲՈՒԶԱՅԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Կիևից հյուսիս-արևմուտք գտնվող Բուչա քաղաքի փողոցներում քաղաքացիական հագուստով շուրջ երեք հարյուր զոհվածների մասին են հաղորդում ուկրաինական իշխանությունների ներկայացուցիչներն ու լրագրողները:

Ուկրաինական կողմի պնդմամբ, լուսանկարներում պատկերված մարդիկ սպանվել են ռուս զինվորականների կողմից: Միջոցով, Ռուսաստանը հերքում է մեղադրանքները:

Ռուսաստանի կողմից իրականացված վայրագությունների մասին Եվրամիության հռչակագրին: Հռչակագրին միացել են Ուկրաինան, Վրաստանը և Մոլդովան, ինչպես նաև Եվրամիության թեկնածու երկրներ Յուսիսային Մակեդոնիան, Չեռնոգորիան, Ալբանիան, Բոսնիա և Հերցեգովինան ու Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի երկրները՝ Իսլանդիան, Լիխտենշտեյնը և Նորվեգիան:

Բուչայում տեղի ունեցածի կապակցությամբ Եվրամիությունը ընդունել է հռչակագիր, որտեղ դատապարտում է ռուս զինծառայողների վայրագությունները: Վրաստանը միացել է Բուչայում և Ուկրաինայի այլ քաղաքներում Ռուսաստանի կողմից իրականացված վայրագությունների մասին հռչակագրին:



ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՈՒՎՐԱՄԻՆԱՆ, ՑԱՎՈՔ, ՎԵՐԱԾՎԵԼ Է ՎՐԱՍՏԱՆԻՑ ՓԱՍՏ ՔՐԵԱԿԱՆՆԵՐԻ ԱՊԱՍՏԱՐԱՆԻ»

Վրաստանի մշակույթի նախարար Թեա Ծուլուկիանին, մեկնաբանելով Ուկրաինայի պաշտպանության նախարարության հետախուզական ծառայության հայտարարությունը, նշեց, որ մեղադրելու դեպքում, ապացույցներ են հարկավոր:
- Մենք սպասում ենք Ուկրաինայի կառավարության ապացույցներին՝ հնարավորինս շուտ հիմնավորելու կեղտոտ սուտը, այլապես կեզրակացնենք, որ գործը վերա-

բերում է կեղծ մեղադրանքին:
Մշակույթի նախարարը, ուկրաինական կողմին կոչ արեց չմեղավել «փախած Գիա Լորթքիփանի ձեռքից»:
- Լավ կլինի, եթե Ուկրաինայի ղեկավարությունը չմեղավի, չլսի քրեականներին, ովքեր Վրաստանից փախել և ապաստանել են Ուկրաինայում:
Երբ պետությանը մեղադրում են, բնականա-

բար, ապացույցները են հարկավոր ներկայացնել: Ուստի, մենք սպասում ենք Ուկրաինայի կառավարության և համապատասխան ծառայությունների ապացույցներին՝ հնարավորինս շուտ՝ հիմնավորելու այն կեղտոտ հերյուրանքը, որը հնչել է մի քանի օր առաջ: Հակառակ դեպքում, մենք կեզրակացնենք, որ գործը, մեղմ ասած, կեղծ մեղադրանքի մասին է,- ասաց Թեա Ծուլուկիանին:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՅՆԵՐԸ

ԵՎՐԱՆՏԵԳՐՈՒՄ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՐԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՅԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ԵՄ-ի հետ օրենսդրական, այնպես էլ՝ ինստիտուցիոնալ մերձեցման առումով:

«Վրաստանի խորհրդարանն ակտիվ կներգրավվի գործընթացում՝ օրենսդրական ուղղությամբ արդյունավետ քայլեր ձեռնարկելու համար: Յուրաքանչյուր գերատեսչություն հանձնարարականներ է ստացել վարչապետից՝ հնարավորինս սեղմ ժամկետներում եւ արդյունավետ կերպով ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերն այդ ճանապարհին»,- ասված է հաղորդագրության մեջ:

Հանձնաժողովի նիստում հաստատվեց 2022 թվականի Վրաստանի եվախնտեգրման գործողությունների ազգային ծրագիրը, լավեց 2021 թվականի ծրագրի կատարման հաշվետվությունը, ինչպես նաեւ քննարկվեցին ԵՄ Արեւելյան գործընկերության առաջատար նախագծերն ու դրանց իրականացման հեռանկարները:



ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ ԱՁԱՏՎՈՒՄ Ե ԳՈՒՅՔԱՅԱՐԿԻՑ

Ապրիլի 4-ի կառավարության նիստում Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հայտարարեց, որ կառավարության որոշմամբ զբոսաշրջության ոլորտի ներկայացուցիչները չեն վճարի 2021 թվականի գույքահարկը:

«Մենք ուսումնասիրել ենք այս ոլորտում առկա իրավիճակը, մարտահրավերներն ու խնդիրները, որոնք կուտակվել են: Բնականաբար, այս ոլորտն ամենաշատն է տուժել կորոնավիրուսի պատճառով, այդ թվում՝ հյուրանոցների եւ ռեստորանային ինդուստրիան: Ուստի, նշված հատվածը 2021 թվականի գույքահարկը չի վճարի, ասաց Իրակլի Դարիբաշվիլին:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԿՍԵՅԻ ԱՅՅԵԼԵԼ ՄԱՐԶԵՐ՝ ԱՆՉԱՄԲ ՏԵՍԵԼՈՒ ԱՌԱՋՆԵԹԱՆԸ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, իր նախընտրական քարոզարշավի շրջանակներում բնակչության հետ հանդիպումներում, հայտարարել էր, որ ամենամբ է հետեւելու յուրաքանչյուր մունիցիպալիտետում իրականացվող նախագծերի ընթացքին:

րական քարոզարշավի ընթացքում ամենամբ եղել են բոլոր քաղաքապետարաններում, հանդիպել բնակչության հետ եւ խոստացել բազմաթիվ ծրագրեր իրականացնել, ուստի այսօր սկսեցի զնալ մարզեր՝ ամենամբ տեսնելու, թե ինչպես են իրականացվում աշխատանքները, նախագծերը: Նպատակը մեկն է՝ արագացնել զարգացման տեմպերը, մեծացնել դրանք ողջ երկրում,- հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին:

Աջարիա կատարած այցի շրջանակներում, կառավարության ղեկավարը եղավ Բաթումիում, Քոբուլեթիում, Խուլոյի մունիցիպալիտետներում, ծանոթացավ տեղերում իրականացվող ենթակառուցային նախագծերին:

Կատարելով նախընտրական խոստումը՝ վարչապետը սկսել է իր տարածաշրջանային շրջայցերը: Ինչպես տեղեկացրին կառավարության գրասենյակից, Աջարիայից մեկ-

նարկած շրջայցը շարունակվելու է երկրի բոլոր տարածաշրջաններում, այդ թվում՝ Սամցխե-Ջավախեթիում, Քվեմո Բարթիում: Ինչպես գիտեք, նախընտ-

ԿԸՂ



ՄԻՋԱՆԿՅԱԼ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՅԱՂԹԵՑԻՆ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

Ապրիլի 2-ին Ռուսթավիում անցկացվեցին Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավորի, իսկ Բաթումիում՝ տեղական սակրեբուլոյի պատգամավորի միջանկյալ ընտրություններ:

Քվեների հաշվարկումից հետո, Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Գիորգի Կալանդարիշվիլին ներկայացրեց Վրաստանի խորհրդարանի եւ Բաթումիի սակրեբուլոյի միջանկյալ ընտրությունների նախնական արդյունքները:

Քվեների հաշվարկումից հետո, Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Գիորգի Կալանդարիշվիլին ներկայացրեց Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավորի ընտրություններում «Վրացական երազանքի» թեկնածու Իրակլի Շատակիշվիլին ստացել է ընտրողների ձայների 90,61, իսկ Բաթումիի սակրեբուլոյի պատգամավորի ընտրություններում կառավարող թիմի թեկնածու Ռամազ Ջինճարաձեն՝ 69,01 տոկոսը:

Քվեների հաշվարկումից հետո, Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Գիորգի Կալանդարիշվիլին ներկայացրեց Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավորի ընտրություններում «Վրացական երազանքի» թեկնածու Իրակլի Շատակիշվիլին ստացել է ընտրողների ձայների 90,61, իսկ Բաթումիի սակրեբուլոյի պատգամավորի ընտրություններում կառավարող թիմի թեկնածու Ռամազ Ջինճարաձեն՝ 69,01 տոկոսը:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆԻՆՈՇՄԻՆԴԱՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ



Ապրիլի 4-ին Նինոծմինդայի քաղաքապետ Անի Մոստյանը հյուրընկալեց Նինոծմինդա քաղաքի թիվ 1 համարային դպրոցի 9-րդ դասարանի 22 աշակերտի:

Ինչպես նշեց դպրոցի «Քաղաքացիական կրթություն» առարկայի ուսուցչուհի Ռուզաննա Ստամբուլցյանը, հանդիպման նպատակը տեղական ինքնակառավարում-գործադիր-ներկայացուցչական մարմինների աշխատանքային գործունեությանն ու ոլորտներին ծանոթանալն էր:

Աշակերտները գոհունակությամբ հրաժեշտ տվեցին քաղաքապետ Անի Մոստյանին եւ շնորհակալություն հայտնեցին բոլոր հարցերին սպառնիչ ու ոգեշնչող պատասխաններ ստանալու համար:

ԿԱՐԱՏԵԻՍՏՆԵՐԻՆ ՆԿԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՆԻՆՈՇՄԻՆԴԱՅՈՒՄ

Ապրիլի 4-ին Նինոծմինդայի քաղաքապետարանի մշակույթի եւ սպորտի ծառայությունը կազմակերպեց հան-

դիպում Հայաստանի «Կիոկուշին» կարատեի միջազգային առաջնության նիստումինդացի հաղթողների հետ: Մրցաշարին մասնակից տարբեր երկրների ավելի քան 280 մարզիկների թվում էին Նինոծմինդայի մարզադպրոցի 4 մարզիկները՝ Վալիկ Պողոսյանը (Ջիգրաշեն), Ենոք Բոռյանը (Կաթնատու), Արսեն Կյուրեղյանը (Գորելովկա), Հայկ Մանուկյանը (Նինոծմինդա)՝ մարզիկներ Սամվել Դարբինյանի եւ Սերգո Քսպոյանի գլխավորությամբ: Մրցաշարին նիստումինդացիների մասնակցությունը ֆինանսավորել էր Վրաստանի կիոկուշինկայի կարատեի ֆեդերացիան:

Ենոք Բոռյանը 16-17 տարեկանների մրցաշարում գրավեց առաջին տեղը, Հայկ Մանուկյանը երկրորդն էր՝ 13 տարեկանների, իսկ Վալիկ Պողոսյանը՝ երրորդը՝ 16-17 տարեկանների մրցաշարում:

Մարզիչ Սամվել Դարբինյանի խոսքով, մրցաշարից նիստումինդացի մարզիկները վերադարձան ոսկե, արծաթե, բրոնզե մեդալներով եւ պատվավոր գավաթով:

Միջոցառմանը ներկա էին եւ հաղթողներին ողջունեցին Նինոծմինդայի քաղաքապետ Անի Մոստյանը, սակրեբուլոյի փոխնախագահ Գիորգի Չապանյանը, քաղաքապետարանի աշխատակիցները:

ԱՎԵԼԱՑՎԵԼ Է ԱԽԱԼՑԻՍԵԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՏՐԱՍԱԴՐՎՈՂ ՍՈՑՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախորդ տարվա համեմատ, ավելացվել է Ախալցխի մունիցիպալային բյուջեից սոցոգնության համար հատկացվող գումարը: Ինչպես տեղեկացրին Ախալցխի քաղաքապետարանում, 2022 թվականի մունիցիպալային բյուջեից առողջապահության եւ սոցիալական ծրագրից հունվար-մարտ ամիսներին օգտվել է 4589 շա-

հառու, ծախսվել է 362 934 լարի: Սոցիալական տարբեր ծրագրերից օգտվել է 976 շահառու, ծախսված գումարը կազմել է 132 660 լարի:

ՊԱՏՎՈԳՐԵՐ ՈՒ ՄԵՂԱԼՆԵՐ՝ ՇԱՇԿԻ ՄՐՑԱՇԱՐԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ



Ախալցխի մունիցիպալիտետի քաղաքապետարանի մշակույթի ծառայության նախաձեռնությամբ անցկացվեց դպրոցականների շաշկիի առաջնությունը: Մինչեւ 7-րդ դասարանցիների մրցաշարում Սիվիլիսիի համարային դպրոցի աշակերտուհի Եկատերինա Վարդանյանը զբաղեցրեց երրորդ տեղը՝ առաջին եւ երկրորդ տեղերը զիջելով Բարբարե Օքրոնելիձեին (Ղրելիի դպրոց) եւ Իոնանե Մազմիշվիլուն (Խեոթիի դպրոց):

Մրցաշարի հաղթողներին պատվոգրեր եւ մեդալներ հանձնեցին Ախալցխի փոխքաղաքապետ Ռուբեն Կարապետյանը եւ սակրեբուլոյի նախագահի առաջին տեղակալ Դավիթ Տաբատաձեն:

Պատրաստեց ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

